



**«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

№ 006 26 հունվարի 2022թ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի
Ընդհանուր ժողովի 2022թ. հունվարի 26-ին տեղի ունեցած թիվ 6 նիստի**

Ք.Երևան

Առաջնորդվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի կանոնադրության 7.3 կետի «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի հիմնադիր Մ.Նանյանի հրավերով տեղի ունեցավ Քոլեջի Ընդհանուր ժողովի հերթական նիստը: Նիստին որպես հրավիրված հարակից զեկուցող մասնակցում էր ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանը:

Քոլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 5 կետի առաջին ենթակետի համաձայն՝ Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանը բացելով նիստը, նախ ողջունեց բոլոր մասնակիցներին, շնորհավորեց նոր տարվա կապակցությամբ և ներկայացրեց նիստի օրակարգը:

1. Քոլեջի 2021 թվականի բյուջեի կատարողականի և 2022 թվականի նախահաշվի կազմման մասին:

(Զեկուցող՝ Հաշվապահ Ս.Հովակիմյան):

2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2020-2021 ուստարվա գործունեության կատարողականի ներկայացման մասին:

(Զեկուցող՝ տնօրեն Ի.Վարդանյան):

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների մասին:

(Զեկուցող՝ ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյան):

4. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԾ-ի ընթացքի մասին:

(Զեկուցող՝ Տնօրեն՝ Ի. Վարդանյան):

1. **Լսեցին՝** Հաշվապահ Ս.Հովակիմյանի ելույթը Քուլեջի 2021 թվականի բյուջեի կատարողականի և 2022 թվականի բյուջեի նախահաշվի կազմման վերաբերյալ:

Ս.Հովակիմյանը հանգամանորեն, ըստ հոդվածների ներկայացրեց 2021թ. բյուջեի կատարողականը, նշելով, որ բյուջով նախատեսված բոլոր ծախսերը կատարված են (հիմք՝ 2021թ. կատարողական): Հաջորդիվ, Ս.Հովակիմյանը ներկայացրեց 2022 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը (2022 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը կցվում է), նշելով, որ այն մոտ 3%-ով պակաս է նախորդ տարվա բյուջեից: Ի տարբերություն նախորդ տարիների, 2022թ. բյուջեով նախատեսվում է զգալի ծախսեր, կապված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների հետ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ժամանակին հավաքագրելու ուսման վարձավճարները:

Ամփոփելով ելույթը, Ս.Հովակիմյանը նշեց, որ հիմնադիր Մ.Նանյանի հանձնարարությամբ առկա ֆինանսական խնայողության հաշվին 2021-2022 ուստարվա ընթացքում ևս կիրականացվի նյութատեխնիկական ռեսուրսների համալրում և արդիականացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալյանը ի լրումն հաշվապահ Ս.Հովակիմյանի ելույթին ներկայացրեց ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի մոտավոր ծախսերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ղեկավարվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քուլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 7-րդ կետի 3-րդ ենթակետով՝ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քուլեջի 2021 թվականի բյուջեի կատարողականը գնահատել բավարար:
2. Ղեկավարվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քուլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 7-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հաստատել «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քուլեջի 2022 թվականի բյուջեի նախագիծը:
3. Հանձնարարել տնօրեն Ի.Վարդանյանին հետևողական լինել բյուջեի հոդվածներով նախատեսված ծախսերի կատարմանը:

2. **Լսեցին՝** տնօրեն Ի.Վարդանյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քուլեջի 2020-2021 ուստարվա գործունեության կատարողականի ներկայացման վերաբերյալ:

Տնօրեն Ի.Վարդանյանն իր ելույթում ամփոփ տեսքով ներկայացրեց Քուլեջի գործունեության 2020-2021 ուստարվա գործունեության նոր ձևաչափով կատարողականը:

Նշելով, որ հաշվետու տարին ևս լարված էր Հայաստանում հայտարարված արտակարգ դրությանը պայմանավորված: Քուլեջի գործունեության հաշվետվությունը հիմնականում կազմված է բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացված կատարողականների ամբողջականությամբ: Հաշվետվությունը ամփոփ ներկայացնելուց հետո, Ի.Վարդանյանը տեղեկացրեց նաև, որ ներդրված տարեկան կատարողականի (հաշվետվությունը) նոր ձևաչափը ամբողջովին ընդունվել է Քուլեջի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ղեկավարվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քուլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 7-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քուլեջի 2020-2021 ուստարվա գործունեության կատարողականը գնահատել բավարար:
2. Հանձնարարել տնօրեն Ի.Վարդանյանին հաջորդ տարվա ընթացքում ներկայացնել ըստ գործողությունների բարելավման աշխատանքները:

3. **Լսեցին՝** Որակի ապահովման պատասխանատու Ա.Գ.Գյոզյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քուլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների վերաբերյալ:

Ա.Գյոզյանն իր ելույթում հանգամանորեն ներկայացրեց տնօրեն՝ Ի.Վարդանյանի 15.02.2021թ. № ԿԳ 04-Ա հրամանով ձևավորված ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքները: Համաձայն ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքային խմբի աշխատանքային պլան-ժամանակացույցի ամբողջովին իրականացվել են բոլոր գործողությունները: Պլան-ժամանակացույցի համաձայն ամբողջովին իրականացվել են նախապատրաստական բոլոր աշխատանքները, մասնավորապես՝

- ❖ ուսումնասիրվել են Քուլեջում գործող ներքին նորմատիվ իրավական փաստաթղթերը:
- ❖ Կատարվել է աշխատանքների բաշխում, ըստ չափանիշների:
- ❖ Մշակվել են տարբեր հարցումների անցկացման էլեկտրոնային հարցաթերթիկները, որը պլանավորվում է կազմակերպել ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում:
- ❖ Ամբիոնների կողմից տրամադրվել են անհրաժեշտ տեղեկատվությունը:
- ❖ Ուսանողական խորհուրդի կողմից կազմակերպվում են տարբեր միջոցառումներ:

Նա նշեց, որ այս պահի դրությամբ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունը ամբողջական է, ըստ 10 չափանիշների առկա են բոլոր հիմքերը՝ հավելվածների տեսքով: Ընդհանուր ինքնավերլուծության ծավալը կազմում է 98 էջ,

ներառյալ հավելվածների ցանկը: Ինքնավերլուծությունը իր մեջ ներառում է 152 հավելված:

Ամփոփելով ելույթը Ա.Գ.Գյոզալյանը հավաստիացրեց, որ Քոլեջը ամբողջովին պատրաստ է լրացնելու ՈԱԱԿ-ի կողմից պահանջվող էլեկտրոնային հարցաշարը, որից հետո նոր կարող ենք նաև ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմում-հայտը ներկայացնել ՈԱԱԿ հիմնադրամ (ինքնավերլուծությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ա.Գ.Գյոզալյանի հաղորդումն ընդունել ի գիտություն և աշխատանքային խմբի աշխատանքը գնահատել բավարար:
2. Հանձնարարել Ա.Գ.Գյոզալյանին Քոլեջում ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմների բազմազանեցման նպատակով կազմակերպել առցանց հարցումներ և արդյունքների մասին զեկուցել տնօրինական խորհրդին:

4. Լսեցին՝ Տնօրեն Ի.Վարդանյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի վերաբերյալ:

Տնօրեն Ի.Վարդանյանն ամփոփ և բովանդակալից ներկայացրեց 2019-2024թթ. ՌԶԾ-ի պլան ժամանակացույցով կատարված աշխատանքները, համաձայն հաստատված վերջնարդյունքների: Ամփոփելով ելույթը, Ի.Վարդանյանը ներկայացրեց ԳԱՑ-ին համապատասխան 2020-2021 ուստարվա աշխատանքների վերաբերյալ կատարողական զեկույցը (զեկույցը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Տնօրեն Ի.Վարդանյանի կատարողական զեկույցը գնահատել բավարար:

Նախագահ՝

Մ.Նանյան

Քարտուղար՝

Հ.Գրիգորյան